ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի /հայտերի բացման նիստի/

ք. Երևան «28» հուլիսի 2017թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Եղիազարյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության պետ,

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Արման Հարությունյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

Էլլադա Արզաքանյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-17/04» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի միջոցով՝ 2017թ.-ի հուլիսի 28-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Գնման սույն ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրեր առկա չեն:

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	**Հասցեն**
«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ք. Երևան, Բաշինջաղյան 1փ. 13/30
«Յունիքոմփ» ՓԲԸ	ք. Երևան, Չարենցի 37
«Լանս» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 49

4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Յունիքոմփ» ՓԲԸ-ի, «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

5.1 «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի, «Լանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան. վերջիններս գնահատվում են բավարար:

5.2 «Յունիքոմփ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ հաստատված են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն էլեկտրոնային թվային ստորագրության արտատպումը տեսանելի չէ փաստաթղթերի /Հավելված 1-ի, Հավելված 2-ի, Հավելված 2.1-ի, Հավելված 3-ի, Հավելված 4-ի, Հավելված 5-ի/ վրա, ինչպես նաև Հավելված 10-ը կազմված է հրավերով սահմանված պայմաններին անհամապատասխան: Ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով, 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց «Յունիքոմփ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Մասնակիցների առաջարկած գներն են՝

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	«Էյչ Գրուպ» ՍՊԸ			«Յունիքոմփ» ՓԲԸ			«Լանս» ՍՊԸ		
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Համակարգչային սերվերներ	12 250 000	2 450 000	**14 700 000**	23 425 000	4 685 000	**28 110 000**	18 000 000	3 600 000	**21 600 000**
2	Սեղանի համակարգիչներ	53 125 000	10 625 000	**63 750 000**	47 267 083,33	9 453 416,67	**56 720 500**			

7. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ին:

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Լանս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակել տեղեկագրում,

2) իր և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել տեղեկագրում,

3) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

4) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. օգոստոսի 03-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

-Ղեկավարվելով Կարգի 46-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017թ. օգոստոսի 07-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Եղիազարյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Խորեն Պետրոսյան

Արման Հարությունյան

Էլլադա Արզաքանյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան